

–Առաջին դասս է այս, Յակոբ աղա. ի՞նչ ընեմ, Թուրքիոյ մէջ պաշտօն վարողներն ամենէն առաջ այս բայը կը սորվին:

6 Օգոստոս

Կարնոյ երիտասարդութիւնն դիտաւորութիւն ունի Կարնոյ մէջ մամուլ մը հաստատել եւ լրագիր հրատարակել:

Կը գովենք Կարնոյ աշխոյժ եւ վառվռուն երիտասարդութեան դիտաւորութիւնն, որուն իրանալուն համար յաջողութիւն կմաղթենք մեր բոլոր սրտէն, որ շատ լայն չէ դժբախտաբար: Կը փափագինք, որ այս երիտասարդութիւնն իրեն հետեւողներ ունենայ, բայց չենք կարծեր, որ իրեն ընթերցողներ գտնէ, վասն զի մեր մէջ լրագիր կարդալն դեռ իբրեւ ապաշխարանք կնկատուի, իբրեւ մեծ պատիժ մը կնկատուի, այնպէս որ եթէ մէկուն առաջարկես, որ կա՛մ շաբաթ մը բանտարկուի եւ կամ լրագրի մը տարեկան բաժանորդ գրուի՝ առաջինը կ'ընդունի եւ երկրորդը կը մերժէ: Ուստի երիտասարդութիւնն ընկերութիւններ կազմելով աշխատելու է, որ ընթերցասիրութիւնն հաճի մեր ազգին մէջ ալ մտնելու... եւ եթէ մտած է քիչ մը՝ դուրս չելնելու...:

**

–Տղա՛ս, դուն քննութիւն չտուի՞ր:

–Տուի, հայրիկ:

–Պարզեւաբաշխութեան օրը դասատուդ գիրք մը նուէր չըրա՞ւ քեզի:

–Ո՛չ, հայրիկ:

–Ինչո՞ւ:

–Վասն զի կադանդին օրը դասատուիս ես ալ բան մը չտուի, հայրիկ:

7 Օգոստոս

Ապէտին բաշան երբ Սէլանիկ էր՝ առժամեայ ոստիկանութիւն մը կազմած էր:

Այժմ Սէլանիկէն լուր կու տան, որ այդ առժամեայ ոստիկանութենէն քառասուն հոգի իրենց պաշտօնը թողլով՝ մշտնջենաւոր աւագակներու հետ միացած են:

Իրաւունք չունի՞նք հաւատալու, որ մայրաքաղաքիս ոստիկաններէն շատերը գողերու հետ կը գործեն: